ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ, Բորիս Լազարևսկին Հայաստանի և հայ կանանց մասին. Երևան, ՀՀ ԳԱԱ հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2004, 112 էջ:

XX դ. առաջին տասնամյակներին ռուսական գրական-հասարակական շրջաններում մեծապես աճում է հետաքրքրությունը Հայաստանի, նրա հինավուրց պատմության, գրականության և մշակույթի հանդեպ:

Այս առումով շնորհակալ ու արդյունավետ գործ են կատարել ժամանակին հայտնի, սակայն հետագայում մոռացված ռուս գրական, հասարակական-քաղաքական մի շարք գործիչներ, որոնք Հայաստանն ու հայոց գրական-մշակութային արժեքները ներկայացրել են ռուս ընթերցողական լայն շրջաններին: Վերոնշյալ գործիչներից մեկը Բորիս Լազարևսկին է (1871–1936 թթ.), որի հայանպաստ գործունեության բացահայտմանն էլ նվիրված է Անուշավան Զաքարյանի «Բորիս Լազարևսկին Հայաստանի և հայ կանանց մասին» խորագրով ուշագրավ աշխատությունը: Այն բաղկացած է երեք մասից՝ երկու գլխից, շրջանառության մեջ դրվող՝ Բ. Լազարևսկու ստեղծագործություններից և հավելվածից:

Առաջին գլխում հեղինակը ներկայացնում է Հայաստանը Բ. Լազարևսկու գործունեության մեջ, ընդարձակ տեղեկություններ հաղորդում Հայաստանին վերաբերող նրա առնչությունների մասին: Պարզվում է, որ Բ. Լազարևսկին՝ ուկրաինացի պատմաբանի որդին, Կիևի համալսարանի շրջանավարտը, ռուսական գրական միջավայրում ժամանակին լայնորեն հայտնի էր սիրային թեմաներով գրած պատմվածքներով՝ Չեխովի հետևությամբ և հաճախ ընդօրինակելով նրան:

Ուսումնասիրության հեղինակը քայլ առ քայլ բացահայտում է Լազարևսկու ծանոթությունն ու առնչությունները Հայաստանի, հայ գրական գործիչների և մշակութային արժեքների հետ: Լազարևսկին հայ հասարակայնության ներկայացուցիչների հետ շփումներ ունեցել է ոչ միայն Ռուսաստանի քաղաքներում, այլև հենց Անդրկովկասում՝ Թիֆլիսում և Երևանում: 1920 թ. գարնանը, շրջագայելով Անդրկովկասում, նա դասախոսություններով հանդես է գալիս հանրության լայն խավերի առջև: Մասնավորապես հայտնի է, որ 1920 թ. ապրիլի 28-ին Թիֆլիսի կոնսերվատորիայի լեփ-լեցուն դահլիճում Լազարևսկին դասախոսություն է կարդում «Հայաստանի օրիորդները և կանայք» թեմայով, որը լայն արձագանք է գտնում ժամանակի մամուլում: Դասախոսության առաջ բերած հետաքրքրությունն այնքան մեծ է լինում, որ «Հայ աշակերտական ընդհանուր միության» խնդրանքով նախատեսվում է դրա կրկնությունը մայիսի 2-ին: Հենց նույն օրն էլ ռուս գրողն այցելում է Հովհ. Թումանյանին և վերջինիս հուշամատյանում թողնում խորիմաստ մի գրառում: Այն եզրափակվում է հետևյալ տողերով. «Հայաստանը կհանգստանա այն ժամանակ, երբ սերը մերձավորի հանդեպ ֆիկցիայից կդառնա իրականություն… Այդ մեծ գործում պետք է հսկայական դեր խաղան Հայաստանի աղջիկներն ու կանայք և բանաստեղծները» (էջ 12): Ուսումնասիրող գիտնականը եզրակացնում է, որ, ամենայն հավանականությամբ, Թումանյանը ներկա է եղել Լազարևսկու դասախոսությանը և, դրանից հետո, իր սովորության համաձայն, վերջինիս հրավիրել է տուն և հյուրընկալ, ջերմաշունչ օջախում շարունակել զրույցը հայ կանանց արտասովոր ճակատագրի, բնավորության, առաքինությունների, մարդկանց ու ժողովուրդներին միմյանց կապող սիրո և բարության մասին:

Աշխատության երկրորդ գլուխը կրում է «Հայաստանի աղջիկներն ու կանայք Բ. Լազարևսկու ակնարկաշարում» խորագիրը: Դրանում նախ ներկայացվում են ռուս ճանապարհորդների և գործիչների՝ Գանկևիչի, Ա. Ելիսեևի, Յու. Վեսելովսկու բնութագրումներն ու վերաբերմունքը հայ իրականության մեջ կնոջ դերի, նրա դրության, կանանց հարցի ուսումնասիրության խնդրի գիտակցության և կարևորության մասին: Ի դեպ, դիտարկումներից հետևում է, որ վերոհիշյալ գործիչները, ժամանակին ճանապարհորդելով Կովկասում և Փոքր Ասիայում, ուշագրավ ուսումնասիրություններ են կատարել հայ կնոջ վարք ու բարքի, ինքնության և առաքինությունների վերաբերյալ:

Այնուհետև հանգամանորեն վերլուծվում է Կ. Պոլսի «Ճակատամարտ» թերթի 1920 թ. հոկտեմբերյան համարներում հրապարակված՝ Բ. Լազարևսկու «Հայաստանի աղջիկներն ու կիները»ակնարկաշարը: Ան. Զաքարյանի համոզմամբ, այն հայ ժողովրդի ցեղասպանությանն արձագանքող ուշագրավ նյութ է: Հայ կնոջ ընդհանրական կերպարի ու պատմականորեն ձևավորված բնավորության, հոգեկերտվածքի միջոցով ներկայացվում են հայ ժողովրդի դարավոր ճակատագրի դժվարին ընթացքն ու էությունը: Այս առումով բնորոշ է Լազարևսկու սույն բնութագրումը. «Փոքր Ասիո ցեղերուն մեջ ոչ մեկ ուրիշ ժողովուրդ այնքան նախանձախնդրությամբ պահած է ընտանեկան օջախը, որքան հայերը: Նույնիսկ Հայաստանի թշնամիները կխոստովանեն ասիկա» (էջ 21): Հայ կնոջ դերի և առաքինությունների մեջ օտարազգի հեղինակն արժևորում է հատկապես արժանապատվության զգացումը՝ նշելով, որ հայ կանայք օժտված են «ամենաբարձր արժանապատվությամբ»:

Աշխատության երկրորդ մասում ներկայացված են Ան. Զաքարյանի պրպտումների շնորհիվ ժամանակի մամուլում հայտնաբերված՝ Բորիս Լազարևսկու ստեղծագործությունները, որոնց գլխավոր հերոսուհիները հայ կանայք են:

Հավելվածում զետեղված են օտար այլ հեղինակների (Գանկևիչ, Ելիսեև) կարծիք-բնութագրումները հայ կնոջ մասին: Հետաքրքրական է ռուս նշանավոր գրական–հասարակական գործիչ Սերգեյ Գորոդեցկու ակնարկը՝ նվիրված Բ. Լազարևսկու կյանքի և գործունեության համապատկերին:

Նշենք, որ բանասեր-պատմաբան Ա. Զաքարյանը հերթական աշխատասիրությամբ կերտել է մի ուսումնասիրություն, որում արծարծված հարցերն ու հարցադրումները նորովի լույս են սփռում XX դ. առաջին տասնամյակի ընթացքում հայ իրականության մեջ գործած ռուս գրագետի գործունեության վրա, բացահայտում օտար հեղինակի ազնիվ և արդարամիտ վերաբերմունքը հայ ժողովրդի ազգային արժեքների հանդեպ:

Հավելենք, որ աշխատության մեջ զետեղված նյութերը հրատարակվել են բնագրերի լեզվով, պահպանվել են դրանց առանձնահատկությունները՝ առանց խմբագրական միջամտությունների (բացառությամբ կետադրական և ուղղագրական մասնակի շտկումների), իսկ յուրաքանչյուր նյութի վերջում նշված է սկզբնաղբյուրը:

Անուշավան Զաքարյանի սույն աշխատության շնորհիվ մեր հասարակական-քաղաքական միտքը հարստացավ հայ իրականությունը բազմակողմանիորեն ուսումնասիրած և այն իր ստեղծագործություններում արտացոլած, մինչ այժմ մոռացված ևս մեկ ռուս գրական գործչի գործունեության լուսաբանությամբ:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ա. Հ.
Պատմական գիտությունների թեկնածու